

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի 2002/44/ԵՀ
հրահանգ**

Ֆիզիկական գործոններից (թրթռում) առաջացող ռիսկերին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության ապահովման նվազագույն պահանջների մասին (Տասնվեցերորդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 137(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2)2),

խորհրդակցելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի հետ,

գործելով Համաձայնագրի 251 հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն և ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2002 թվականի ապրիլի 8-ին հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

պայմանագրում նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով կարող է ընդունել հատկապես աշխատանքային միջավայրի բարելավման խթանմանն ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանման ավելի բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Նման հրահանգներով ձեռնպահ են մնում այնպիսի վարչական, ֆինանսական և իրավաբանական սահմանափակումներ սահմանելուց, որոնք կխոչընդոտեն փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

2) աշխատողների հիմնարար սոցիալական իրավունքների մասին Համայնքի խարտիայի իրականացմանն ուղղված գործողությունների ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովի հաղորդագրությամբ նախատեսում է առողջության և անվտանգության ապահովման նվազագույն պահանջների ներմուծում՝ Ֆիզիկական գործոններից առաջացող ռիսկերի համար, որոնց ենթարկվում են աշխատողները: 1990 թվականի սեպտեմբերին Եվրոպական պառլամենտն այս գործողությունների ծրագրի վերաբերյալ որոշում է ընդունել (4): Այդ

որոշմամբ Եվրոպական պառլամենտը կոչ արեց Հանձնաժողովին, մասնավորապես, կազմել հատուկ հրահանգ այն ռիսկերի մասին, որոնք առաջանում են աշխատավայրում՝ աղմուկի ու թրթռումների և որևէ այլ ֆիզիկական գործոնի հետևանքով,

3) որպես առաջին քայլ՝ հարկ համարվեց ներմուծել այնպիսի միջոցներ, որոնք կպաշտպանեն աշխատողներին թրթռումներից առաջացող ռիսկերից՝ կապված նրանց առողջությանը և անվտանգության հասցվող ազդեցությունների հետ, մասնավորապես, մկանային/ոսկրային, նյարդաբանական և անոթային խանգարումների առնչությամբ առումով: Այդ միջոցները ոչ միայն նախատեսված են ապահովելու յուրաքանչյուր աշխատողի առողջությունը և անվտանգությունը առանձին-առանձին, այլ նաև Համայնքի բոլոր աշխատողների համար ստեղծելու պաշտպանության նվազագույն հիմք՝ խուսափելու համար մրցակցության հնարավոր խաթարումից,

4) սույն Հրահանգով սահմանվում են նվազագույն պահանջներ՝ դրանով իսկ հնարավորություն տալով անդամ պետություններին ներմուծելու կամ պահպանելու առավել բարենպաստ դրույթներ՝ աշխատողներին պաշտպանելու համար, մասնավորապես, սահմանելով թրթռումների ամենօրյա ընդունելի և թույլատրելի ուժգնության ավելի ցածր մակարդակ: Սույն Հրահանգի կիրարկումը չպետք է ծառայի՝ արդարացնելու համար որևէ հետընթաց այն իրավիճակի մասով, որն արդեն առկա է յուրաքանչյուր անդամ պետությունում,

5) թրթռումներից պաշտպանվելու համակարգը պետք է սահմանափակվի նման ազդեցությունների սահմանմամբ, պետք է ավելորդ մանրամասներից զուրկ լինի, պետք է ներառի այնպիսի նպատակներ, որոնք պետք է ձեռք բերել, այնպիսի սկզբունքներ, որոնց պետք է հետևել և այնպիսի հիմնարար արժեքներ, որոնք պետք է օգտագործվեն, այնպես որ անդամ պետությունները կարողանան համարժեքորեն կիրառել նվազագույն պահանջները,

6) թրթռման ազդեցության մակարդակը կարելի է առավել արդյունավետորեն նվազեցնել աշխատակայանների և աշխատատեղերի նախագծերում կանխարգելիչ միջոցներ ներառելով և ընտրելով այնպիսի աշխատանքային սարքավորումներ, ընթացակարգեր և մեթոդներ, որոնց միջոցով սկզբնաղբյուրում ռիսկերի նվազեցմանը նախապատվություն է տրվում : Աշխատանքային սարքավորումներին և մեթոդներին վերաբերող դրույթները, այդպիսով, նպաստում են ներգրավված աշխատողների պաշտպանությանը,

7) գործատուները պետք է փոփոխություններ կատարեն տեխնիկական առաջընթացին և գիտությանը համապատասխան, կապված թրթռումների ներգործության ենթարկվելու ռիսկերի հետ՝ նպատակ ունենալով բարելավելու աշխատողների առողջություն ու անվտանգության պաշտպանությունը,

8) ծովային և օդային տրանսպորտի դեպքում, հաշվի առնելով ներկա իրավիճակը, հնարավոր չէ ապահովել համապատասխանությունը բոլոր դեպքերում ամբողջ մարմնի թրթռումների թույլատրելի ուժգնության հետ, ուստի պետք է դրույթ նախատեսել՝ որոշակի դեպքերում պատշաճ կարգով հիմնավորված ազատումների/բացառությունների համար,

9) քանի որ «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումներ նախատեսելու մասին» սույն Հրահանգը 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) իմաստով անհատական հրահանգ է (5), այդ Հրահանգը, հետևաբար, ամբողջությամբ կիրառվում է այն թրթռումների նկատմամբ, որոնց ենթարկվում են աշխատողները՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

10) քանի որ սույն Հրահանգով ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորմանը միտված գործնական քայլ է կատարվում,

11) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն «Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների կիրառման ընթացակարգերը սահմանելու մասին» Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն (6),

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակները և գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգը, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով 16-րդ անհատական Հրահանգ է, սահմանում է աշխատողներին՝ մեխանիկական թրթռումների առկայության հետևանքով առաջացող կամ հավանաբար առաջացող՝ առողջությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգից աշխատողների պաշտպանության նվազագույն պահանջները:
2. Սույն Հրահանգի պահանջները կիրառվում են այն գործողությունների նկատմամբ, որտեղ աշխատողներին աշխատանքի ընթացքում հավանական է, որ սպառնում է մեխանիկական թրթռումների ռիսկը:
3. 89/391/ԵՏՀ հրահանգն ամբողջությամբ կիրառվում է 1-ին պարբերության մեջ նշված ամբողջ տարածքում՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով կիրառվում են հետևյալ հասկացությունները.

- ա) **«ձեռքի թրթռումներ»** մեխանիկական թրթռումներ, որոնք մարդու ձեռքերին հաղորդվելու դեպքում ռիսկեր են առաջացնում աշխատողների անվտանգության և առողջության համար, մասնավորապես, հանգեցնելով անոթային, ոսկրային կամ հոդային, նյարդաբանական կամ մկանային խանգարումների.
- բ) **մարմնի թրթռումներ՝** մեխանիկական թրթռումներ, որոնք աշխատողի մարմնին հաղորդվելու դեպքում առաջացնում են աշխատողի անվտանգությանը և առողջությանը սպառնացող ռիսկեր և, մասնավորապես, հանգեցնում որովայնային հիվանդությունների և ողնաշարային վնասվածքների:

Հոդված 3

Թրթռումների սահմանային և ընդունելի ուժգնություններ

1. Ձեռքի թրթռումների համար՝

ա) տվյալ թրթռումների ազդեցությանը ենթարկվելու ութժամյա բազային ժամանակահատվածի հաշվարկով օրական թույլատրելի սահմանային ուժգնությունը 5 մետր/քառ. վայրկյան է.

բ) տվյալ թրթռումների ազդեցությանը ենթարկվելու ութժամյա բազային ժամանակահատվածի հաշվարկով օրական ընդունելի ուժգնությունը 2.5 մետր/քառ. վայրկյան է.

Աշխատողի՝ ձեռքի թրթռումների ազդեցության մակարդակը գնահատվում կամ չափվում է հավելվածի Ա մասի 1-ին կետի դրույթների հիման վրա:

2. Ամբողջ մարմնի թրթռումների համար՝

ա) տվյալ թրթռումների ազդեցությանը ենթարկվելու ութժամյա բազային ժամանակահատվածի հաշվարկով օրական թույլատրելի սահմանային ուժգնությունը 1.15 մետր/քառ. վայրկյան է կամ, տվյալ անդամ պետության ընտրությամբ, համարժեք է 21 մ/վ1,75 թրթռումների սահմանային դոզային.

բ) տվյալ թրթռումների ազդեցությանը ենթարկվելու ութժամյա բազային ժամանակահատվածի հաշվարկով օրական ընդունելի ուժգնությունը 1.15 մետր/քառ. վայրկյան է կամ, տվյալ անդամ պետության ընտրությամբ, համարժեք է 9.1 մ/վ1,75 թրթռումների սահմանային դոզային.

Աշխատողի՝ ամբողջ մարմնի թրթռումների ազդեցության մակարդակը գնահատվում է կամ չափվում է հավելվածի Բ մասի 1-ին կետի դրույթների հիման վրա:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

Վտանգների որոշումը և գնահատումը

1. 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) և 9(1) հոդվածում սահմանված պարտավորություններն իրականացնելու նպատակով, գործատուն գնահատում է, անհրաժեշտության դեպքում, մեխանիկական թրթռոցի մակարդակը, որոնց ենթարկվում են աշխատողները: Չափումն իրականացվում է սույն Հրահանգի Ա մասի 2-րդ կետի կամ Բ մասի 2-րդ կետի համաձայն սահմանված կարգով:

2. Մեխանիկական թրթռումների ազդեցության մակարդակը կարող է գնահատվել կոնկրետ աշխատանքային գործընթացների դիտարկմամբ կամ տվյալ աշխատանքային պայմաններում շահագործվող սարքավորումներին կամ սարքավորումների տեսակներին համապատասխանող տատանումների հնարավոր մակարդակների մասին համապատասխան տեղեկությունների՝ ներառյալ սարքավորման արտադրողի կողմից տրամադրված տեղեկությունների օգտագործմամբ: Այդ գործողությունը պետք է տարբերակվի չափումից, որը պահանջում է հատուկ սարքերի և համապատասխան մեթոդաբանության օգտագործում:

3. 1-ին պարբերության մեջ նշված գնահատումը և չափումը պլանավորվում և իրականացվում է իրավասու ծառայությունների կողմի պատշաճ միջակայքերով՝ մասնավոր ուշադրություն դարձնելով 89/391/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածի դրույթներին, որոնք վերաբերում են պահանջվող իրավասու ծառայություններին կամ անձանց: Գնահատման և (կամ) չափման արդյունքում ստացված տվյալները, որոնք վերաբերում են մեխանիկական թրթռումների ներգործությանը, պետք է պահպանվի պատշաճ եղանակով, այնպես որ հնարավոր լինի դրանցից օգտվել հետագայում:

4. 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) հոդվածով նախատեսված գնահատումը կատարելիս գործատուն հատուկ ուշադրություն պետք է դարձնի հետևյալ հանգամանքներին՝

ա) ուժգնության մակարդակը, տեսակը և տևողությունը՝ ներառյալ ընդհատվող թրթռումները կամ կրկնվող ցնցումները,

բ) սույն Հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված ուժգնության սահմանային և ընդունելի մակարդակները,

գ) թրթռումների ազդեցությունն այն աշխատողների վրա, որոնց անվտանգությունը և առողջությունը ենթարկվում են նշված ազդեցության արդյունքում առաջացող ռիսկերին,

դ) մեխանիկական թրթռումների և աշխատավայրի կամ աշխատանքային սարքավորումների միջև փոխազդեցությունների հետևանքով աշխատողների անվտանգության կամ առողջության վրա գործադրվող անուղղակի ազդեցությունը,

ե) Համայնքի համապատասխան հրահանգների համաձայն աշխատանքային սարքավորումներն արտադրողների կողմից տրամադրված տեղեկատվությունը,

զ) փոխարինող այն սարքավորումների առկայությունը, որոնք կոչված են նվազեցնելու մեխանիկական թրթռումների ազդեցությունը,

է) գործատուի պատասխանատվությամբ նորմալ աշխատաժամանակը գերազանցող տևողությամբ թրթռումների առկայությունը,

ը) հատուկ աշխատանքային պայմանները, օրինակ՝ ցածր ջերմաստիճանը,

թ) բժշկական հսկողության հետևանքով ստացված համապատասխան տեղեկությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև գրավոր տեղեկությունները:

5. Գործատուն պետք է տնօրինի ռիսկի գնահատումը՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածի համաձայն և պետք է որոշի, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ սույն Հրահանգի 5-րդ ու 6-րդ հոդվածների համաձայն: Ռիսկերի գնահատման արդյունքներ գրանցվում են համապատասխան կրիչի վրա՝ ազգային օրենսդրության և գործելակերպի համաձայն, այն կարող է ներառել գործատուի հիմնավորումը, որ մեխանիկական թրթռումների հետ կապված ռիսկերի բնույթն ու մակարդակն այնպիսիք են, որ հետագա մանրամասն ռիսկերի գնահատման անհրաժեշտություն չկա: Ռիսկերի գնահատումը կանոնավորապես թարմացվում է հատկապես այն դեպքում, երբ տեղի են ունեցել այնպիսի էական փոփոխություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել դրա արդիականությունը կամ երբ դա անհրաժեշտ է բժշկական ստուգումների արդյունքների հիման վրա:

Հոդված 5

Ազդեցությունից խուսափելու կամ ազդեցությունը կրճատելու վերաբերյալ դրույթները

1. Հաշվի առնելով տեխնիկական առաջընթացը և ռիսկի վերահսկողության միջոցները սկզբնաղբյուրում՝ մեխանիկական թրթռումների ներգործության հետ կապված ռիսկերը պետք է վերացվեն սկզբնաղբյուրում կամ դրանք պետք է նվազագույնի հասցվեն:

Նման ռիսկերի նվազեցումը պետք է իրականացվի 89/391/ԵՏՀ հրահանգի 6(2) հոդվածում սահմանված կանխարգելման ընդհանուր սկզբունքների հիման վրա:

2. Եթե 4-րդ հոդվածում սահմանված ռիսկերի գնահատման հիման վրա թրթռումները գերազանցում են ուժգնության թույլատրելի մակարդակը, ապա անհրաժեշտ է նվազագույնի հասցնել մեխանիկական թրթռումների և հարակից ռիսկերի ազդեցությունը՝ սահմանելով ու իրականացնելով տեխնիկական և (կամ) կազմակերպչական միջոցառումների այնպիսի ծրագիր, որը համահունչ է աշխատանքներին ու ռիսկերի գնահատման արդյունքներին: Նշված ծրագրում հաշվի է առնվում հետևյալը՝

ա) աշխատանքի այլ մեթոդներ, որոնց շնորհիվ կրճատվում է մեխանիկական թրթռումների ազդեցությունը,

բ) համապատասխան էրգոնոմիկ կառուցվածք ունեցող և նվազագույն հնարավոր թրթռումներ առաջացնող աշխատանքային սարքավորումների ընտրությունը, որի ժամանակ հաշվի են առնվում կատարվելիք աշխատանքները,

գ) օժանդակ սարքավորումների տրամադրումը, որոնք նվազեցնում են թրթռումների արդյունքում առաջացող մարմնական վնասվածքների ռիսկը, օրինակ՝ նստատեղերը, որոնք արդյունավետորեն մեղմացնում են ամբողջ մարմնի թրթռումները կամ բռնակները, որոնք մեղմացնում են ձեռքերին հաղորդվող թրթռումները,

դ) աշխատանքային սարքավորումների, աշխատավայրերի, աշխատատեղերի և աշխատանքային համակարգերի պահպանման համապատասխան ծրագրերը,

ե) աշխատավայրերի և աշխատատեղերի կառուցվածքն ու հատակագիծը,

զ) մեխանիկական թրթռումների ուժգնությունը նվազագույնի հասցնելու նպատակով աշխատանքային սարքավորումների ճիշտ և անվտանգ օգտագործման մասին համապատասխան տեղեկությունների տրամադրումն աշխատողներին և նրանց ուսուցման անցկացումը,

է) թրթռումների տևողության և ուժգնության սահմանափակումը,

ը) աշխատանքային գրաֆիկների և հանգստի ժամերի ճիշտ սահմանումը,

թ) ցուրտ և խոնավ պայմաններում աշխատողներին համապատասխան պաշտպանական հագուստի տրամադրումը:

3. Աշխատողները յուրաքանչյուր դեպքում չպետք է ենթարկվեն ուժգնության ընդունելի մակարդակի:

Եթե թրթռումները գերազանցում են սահմանային ուժգնության մակարդակը, չնայած սույն Հրահանգին համապատասխան ձեռնարկված միջոցառումներին, ապա գործատուն պետք է քայլեր իրականացվի՝ մեխանիկական թրթռումները սահմանային ուժգնության մակարդակից ցածր պահելու համար, նպատակով: Նա պետք է բացահայտի սահմանային ուժգնության մակարդակի գերազանցման պատճառները և փոփոխություններ կատարի պաշտպանական ու կանխարգելիչ միջոցառումներում՝ սահմանային ուժգնության գերազանցման հետագա դեպքերը կանխելու նպատակով:

4. 89/391/ԵՏՀ հրահանգի 15-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն պետք է համապատասխանեցնի սույն հոդվածում սահմանված միջոցառումները հատկապես ռիսկային գոտում աշխատող անձանց պահանջներին:

Հոդված 6

Տեղեկատվությունը և վերապատրաստումը

Չհակասելով թիվ 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ և 12-րդ հոդվածներին՝ գործատուն պետք է ապահովի, որ մեխանիկական թրթռումների ազդեցության ռիսկին ենթարկվող աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների համար անհրաժեշտ է տրամադրել բավարար տեղեկատվություն, անցկացնել ուսուցում սույն Հրահանգի 4(1) հոդվածում սահմանված ռիսկերի գնահատման արդյունքների վերաբերյալ, մասնավորապես, հետևյալի վերաբերյալ՝

ա) սույն Հրահանգի իրականացման նպատակով ձեռնարկված միջոցառումների, որոնց նպատակը մեխանիկական թրթռումների ռիսկը վերացնելը կամ նվազագույնի հասցնելն է,

բ) թրթռումների սահմանային և ընդունելի ուժգնությունների,

զ) սույն Հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն կատարված մեխանիկական թրթռումների գնահատման և չափման արդյունքների ու աշխատանքային սարքավորումների շահագործման հետ կապված հնարավոր ռիսկերի,

դ) առողջության խանգարումների պատճառների և նախանշանների զեկուցման կարգի,

ե) այն հանգամանքների, որոնց ի հայտ գալու դեպքում աշխատողները բժշկական հսկողության են ենթարկվում,

զ) մեխանիկական թրթռումների ազդեցության նվազեցմանը նպաստող անվտանգ աշխատանքային գործելակերպերի:

Հոդված 7

Աշխատողների հետ խորհրդակցությունը և նրանց մասնակցությունը

Սույն Հրահանգով կարգավորվող հարցերի շուրջ աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ քննարկումներն իրականացվում են, և նրանց մասնակցությունն ապահովվում է 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն:

ԲԱԺԻՆ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 8

Առողջության հսկողությունը

1. Չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 14-րդ հոդվածը՝ անդամ պետությունները պետք է ընդունեն այնպիսի դրույթներ, որոնք կապահովեն, որ բոլոր աշխատողները ենթարկվեն բժշկական հսկողության այն դեպքում, եթե սույն Հրահանգի 4(1) հոդվածում նախատեսված ռիսկերի գնահատման արդյունքներով ցույց է տրվում, որ նրանց առողջությունը վտանգված է: Այս դրույթները՝ ներառյալ բժշկասանիտարական փաստաթղթում սահմանված պահանջները և դրանց առկայությունը, պետք է նախատեսվեն ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպի համաձայն:

Բժշկական հսկողությունն իրականացվում է, երբ՝

– աշխատողի վրա մեխանիկական թրթռումների ազդեցությունն այնպիսին է, որ ախտորոշված հիվանդությունը կամ առողջության խանգարումները կարող են վերագրվել նշված ազդեցությանը,

– հավանական է, որ հիվանդությունը կամ դրա հետևանքը կարող է ի հայտ գալ նրա աշխատանքի որոշակի պայմաններում և

զոյություն ունեն ստուգման սարքեր՝ հիվանդության կամ դրա հետևանքի բացահայտման համար:

Ցանկացած դեպքում, այն աշխատողները, որոնք ենթարկվում են մեխանիկական թրթռման ազդեցության 3(1)(բ) և (2)(բ) հոդվածում սահմանված թույլատրելի ուժգնության մակարդակից շատ, պետք է ենթարկվեն պատշաճ բժշկական հսկողության:

2. Անդամ պետությունները միջոցներ են նախատեսում՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր աշխատող, ով անցնում է բժշկական հսկողություն՝ 1-ին պարբերության համաձայն, ստեղծվում են անհատական բժշկական քարտեր և թարմացվում են: Բժշկական քարտերում լրացվում են իրականացված բժշկական հսկողության արդյունքների ամփոփ տեղեկությունները: Դրանք պետք է պահվեն համապատասխան ձևով, որը հնարավոր է դարձնում ավելի ուշ ցանկացած խորհրդակցություն՝ հաշվի առնելով գաղտնիությունը:

Համապատասխան գրառումների օրինակները տրամադրվում են իրավասու մարմնին՝ նրա խնդրանքով: Առանձին աշխատողը պահանջելու դեպքում կարող է ձեռք բերել իրեն անձամբ վերաբերող բժշկական տեղեկատվությունը:

3. Եթե բժշկական հսկողության արդյունքների համաձայն որևէ աշխատողի մոտ ախտորոշվել է հիվանդություն կամ առողջության խանգարում, որի պատճառը, բժշկի կամ առողջապահության ոլորտի աշխատողի կարծիքով, աշխատավայրում մեխանիկական թրթռումներն են՝

ա) ապա բժիշկը կամ մյուս որակավորված անձը տեղեկացնում է աշխատողին անձամբ իրեն վերաբերող արդյունքների մասին: Նա, մասնավորապես, պետք է տեղեկություններ և խորհուրդ ստանա, թե ինչ բուժում պետք է անցնի մեխանիկական թրթռումների ազդեցությունից դուրս գալուց հետո.

բ) գործատուին պետք է տեղեկացնել բժշկական հետազոտության էական արդյունքների մասին՝ հաշվի առնելով բժշկական գաղտնապահությունը.

գ) գործատուն պետք է՝

– ուսումնասիրի 4-րդ հոդվածի համաձայն կատարված ռիսկերի գնահատումը,

– ուսումնասիրի 5-րդ հոդվածում նախատեսված միջոցառումները՝ ուղղված ռիսկերի վերացմանը կամ նվազեցմանը,

– 5-րդ հոդվածով նախատեսված ռիսկերի վերացման կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ժամանակ հաշվի առնի բժշկական ծառայության կամ համապատասխան իրավասու մասնագետի առաջարկությունները՝ ներառյալ տվյալ աշխատողին մեկ այլ՝ անվտանգ աշխատանքի փոխադրելու հնարավորությունը և

ապահովի շարունակական բժշկական հսկողություն և ուսումնասիրի նմանատիպ ազդեցության ենթարկված աշխատողի առողջական վիճակը: Նման դեպքերում, իրավասու բժիշկը կամ առողջապահության ոլորտում աշխատողը կամ իրավասու մարմինը կարող է առաջարկել ազդեցության ենթարկված անձանց բժշկական զննություն անցնել:

Հոդված 9

Անցումային ժամանակաշրջանը

5(3) հոդվածում սահմանված պարտականությունների իրականացման առումով, անդամ պետությունները գործատուների և աշխատողների հետ խորհրդակցելուց հետո ազգային օրենսդրության ու գործելակերպի համաձայն, իրավունք ունեն օգտվելու առավելագույնը 5 տարի ժամկետից 2005 թվականի հուլիսի 6-ից, եթե օգտագործվում է այն աշխատանքային սարքը, որը տրվել է աշխատողներին 2007 թվականի հուլիսի 6-ից առաջ, որոնք թույլ չեն տալիս պահպանել ուժգնության թույլատրելի մակարդակը՝ հաշվի առնելով վերջին տեխնիկական զարգացումները և (կամ) կազմակերպչական միջոցները: Գյուղատնտեսության և անտառային տնտեսության ոլորտներում օգտագործված սարքերի առումով, անդամ պետություններն իրավունք ունեն երկարաձգելու առավելագույն անցումային ժամանակահատվածը մինչև չորս տարի:

Հոդված 10

Շեղումները

1. Աշխատողների առողջության և անվտանգության ապահովման ընդհանուր սկզբունքների համաձայն, անդամ պետությունները ծովային և օդային տրանսպորտի դեպքում, կարող են հիմնավոր հանգամանքներում շեղում կատարել 5(3) հոդվածից ամբողջ մարմնի թրթռումների առումով, եթե, ելնելով աշխատավայրերի վիճակից և հատուկ առանձնահատկություններից, հնարավոր չէ պահպանել թրթռումների թույլատրելի մակարդակը, նույնիսկ եթե տեխնիկական և (կամ) կազմակերպչական միջոցները ձեռնարկվել են:

2. Եթե մեխանիկական թրթռումների ուժգնության մակարդակը, որին ենթարկվում է աշխատողը, սովորաբար ավելի ցածր է 3(1)(բ) և (2)(բ) հոդվածում սահմանված ուժգնության թույլատրելի մակարդակից, սակայն հստակորեն տարբերվում է ժամանակ առ ժամանակ և կարող է որոշ դեպքում գերազանցել ուժգնության թույլատրելի մակարդակը, ապա անդամ պետությունները կարող են թույլ տալ շեղում կատարել 5(3) հոդվածից:

Այնուամենայնիվ, 40 ժամվա ընթացքում հաշվարկված ազդեցության միջին մակարդակը պետք է լինի թույլատրելի սահմանային նորմայից ցածր և պետք է ապացույց լինի, որը ցույց կտա, որ աշխատողների համար ուժգնության միջին մակարդակից առաջացող ռիսկն ավելի փոքր է, քան թույլատրելի սահմանային նորմայից առաջացող ռիսկը:

3. 1-ին և 2-րդ պարբերություններում սահմանված շեղումները շնորհվում են անդամ պետությունների կողմից, ազգային օրենսդրության և գործելակերպի համաձայն, արդյունաբերության/տվյալ ոլորտի երկու կողմի հետ խորհրդակցելուց հետո : Նման շեղումներին կից պետք է ներկայացվեն պայմաններ, որոնք կապահովեն, հաշվի առնելով հատուկ հանգամանքները, որ առաջացող ռիսկերը հասցվում են նվազագույնի և որ տվյալ աշխատողներն անցնում են ուժեղացված բժշկական հսկողություն: Այդ շեղումները պետք է վերանայվեն յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ և վերացվեն, եթե այլևս չկան հիմնավոր հանգամանքները:

4. Չորս տարին մեկ անգամ, անդամ պետությունները պետք է փոխանցեն Հանձնաժողովին շեղումների ցանկը, ինչպես նշված է 1-ին և 2-րդ պարբերություններում նշելով այն հստակ պատճառներն ու հանգամանքները, որոնց հիման վրա շնորհվել են շեղումները:

Հոդված 11

Տեխնիկական փոփոխություններ

Հավելվածում խիստ տեխնիկական բնույթի փոփոխությունը կատարվում է հետևյալի հիման վրա՝

ա) տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման ոլորտում աշխատանքային սարքերի և (կամ) աշխատավայրերի նախագծի, կառուցման, արտադրության կամ շինարարության վերաբերյալ հրահանգների ընդունում.

բ) տեխնիկական առաջընթացը, ամենահարմար ներդաշնակեցված եվրոպական ստանդարտներում կամ մասնագրերում փոփոխությունները, ինչպես նաև մեխանիկական թրթռումների վերաբերյալ նոր արդյունքներն ու եզրակացությունները, պետք է ընդունվեն 12(2) հոդվածում սահմանված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 12

Կոմիտեն

1. Հանձնաժողովին պետք է աջակցի 89/391/ԵՏՀ հրահանգի 17(2) հոդվածում սահմանված Կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

ԲԱԺԻՆ IV

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 13

Հաշվետվությունները

Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են տրամադրում Հանձնաժողովին՝ ներկայացնելով աշխատողների և գործատուների տեսակետները: Այն պարունակում է առողջության վրա վնասակար ազդեցություն ունեցող թրթռումների կանխարգելման լավագույն գործելակերպերի և աշխատանքների կազմակերպման այլ ձևերի նկարագիրը անդամ պետությունների կողմից՝ նման լավագույն գործելակերպը փոխանցելու համար ձեռնարկված միջոցառման հետ միասին:

Այդ հաշվետվությունների հիման վրա, Հանձնաժողովն իրականացնում է Հրահանգի կիրարկման ընդհանուր գնահատում՝ ներառյալ հետազոտության և գիտական տեղեկատվության շրջանակներում իրականացման ընդհանուր գնահատում, ինչպես նաև տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին ու, անհրաժեշտության դեպքում, առաջարկում է փոփոխություններ կատարել :

Հոդված 14

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը գործողության մեջ են դնում 2005 թվականի հուլիսի 6-ից ոչ ուշ: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին: Դրանք պետք է ներառեն անդամ պետությունների կողմից 9-րդ հոդվածի համաձայն ընդունված անցումային միջոցների ցանկը՝ մանրամասն հիմնավորումներով:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական

հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են կամ արդեն ընդունել են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 15

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

Հոդված 16

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 2002 թվականի հունիսի 25-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Պ. Քոքս

Խորհրդի կողմից՝

Նախագահ Զ. Մաթաս Փալուս

[1] ՊՏ C 77, 18.03.1993թ., էջ 12: ՊՏ C 230, 19.08.1994 թ., էջ 3:

[2] ՊՏ C 249, 13.09.1993թ., էջ 28:

[3] Եվրոպական պառլամենտի 1994 թվականի ապրիլի 20-ի եզրակացություն (ՊՏ C 128, 09.05.1994թ., էջ 146)՝ հաստատված 1999 թվականի սեպտեմբերի 16-ին (ՊՏ C 54, 25.02.2000թ., էջ 75), Խորհրդի 2001 թվականի հունիսի 25-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 301, 26.10.2001թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի

որոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում): Եվրոպական պառլամենտի 2002 թվականի ապրիլի 25-ի որոշում և Խորհրդի 2002 թվականի մայիսի 21-ի որոշում:

[4] ՊՏ C 260, 15.10.1990թ., էջ 167:

5] ՊՏ L 183, 29.06. 1989 թ., էջ 1:

[6] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. ՁԵՌՔԻ ԹՐԹՈՒՄՆԵՐ

1. Ազդեցության գնահատումը

Ձեռքի թրթռումների ազդեցության մակարդակների գնահատումը կատարվում է՝ հաշվի առնելով, որ ութժամյա բազային ժամանակահատվածի հաշվարկով օրական մակարդակը 1.15 մետր/քառ. վայրկյան է՝ արտահայտված չափված արագացման արժեքների քառակուսային արժեքների (միջին քառակուսային արժեք) հանրագումարի արմատ քառակուսով (ընդհանուր արժեք), որը որոշվում է a_{hwX} , a_{hwY} , a_{hwZ} օրթոգոնալ առանցքների չափման հիման վրա, ինչպես սահմանված է 2001 թվականի ISO 5349-1 ստանդարտի 4-րդ և 5-րդ գլուխներում ու Ա հավելվածում:

Ուժգնության մակարդակի գնահատումը կարող է իրականացվել արտադրողների կողմից՝ օգտագործված աշխատանքային սարքերից արտանետումների մակարդակի վերաբերյալ տրամադրած տեղեկությունների հիման վրա կազմած գնահատման և հատուկ աշխատանքային գործելակերպերի դիտարկման կամ չափումների հիման վրա:

2. Չափումները

Եթե իրականացվում է չափում 4 (1) հոդվածի համաձայն՝

ա) կիրառվող մեթոդները կարող են ներառել նմուշառումը, որը պետք է ներկայացնի տվյալ մեխանիկական թրթռումներին անձամբ աշխատողի ռիսկը, կիրառվող մեթոդները պետք է համապատասխանեն չափվող մեխանիկական թրթռումներին բնորոշ հատկանիշներին, շրջակա միջավայրի գործողություններին և չափիչ սարքավորումների բնորոշ հատկանիշներին՝ թիվ 5349-2(2001) ԻՍՕ ստանդարտի համաձայն,

բ) այն սարքերի դեպքում, որոնք պետք է պահվեն երկու ձեռքով, չափումները պետք է իրականացվեն յուրաքանչյուր ձեռքում: Ուժգնությունը սահմանվում է երկու ձեռքերից ամենաբարձր մակարդակի հիման վրա, մյուս ձեռքի մասին տեղեկությունը պետք է նույնպես ներկայացվի:

3. Միջամտություն

4(4)(դ) հոդվածը կիրառվում է մասնավորապես, երբ մեխանիկական թրթռումները խանգարում են կառավարման վահանակների պատշաճ կառավարմանը կամ ցուցանիշների ընթերցմանը:

4. Անուղղակի ռիսկերը

4(4)(դ) հոդվածը կիրառվում է, մասնավորապես, այն դեպքում, երբ մեխանիկական թրթռումները միջամտում են կառույցների կայունությանը և հանգույցների անվտանգությանը:

5. Անհատական պաշտպանիչ միջոցներ

Ձեռքի թրթռումներից պաշտպանող անձնական պաշտպանիչ սարքերը կարող են նպաստել 5(2) հոդվածում սահմանված չափման ծրագրին:

Բ. ՄԱՐՄՆԻ ԹՐԹՌՈՒՄՆԵՐ

1. Ազդեցության գնահատումը

Թրթռումների ազդեցության մակարդակների գնահատումը կատարվում է՝ հաշվի առնելով դրան ենթարկվելու օրական մակարդակը՝ արտահայտված ութժամյա ժամանակահատվածում դրան համարժեք շարունակական արագացման արժեքով, որը հաշվարկվում է միջին քառակուսային արժեքի առավելագույն չափով, կամ թրթռումների առավելագույն չափված դրոպով. որը որոշվում է երեք օրթոգոնալ առանցքների ($1,4a_{wx}$, $1,4a_{wy}$, a_{wz})՝ նստած կամ կանգնած աշխատողի համար) չափման հիման վրա, ինչպես սահմանված է 1997 թվականի ISO 2631-1 ստանդարտի 5, 6 և 7-րդ գլուխներում, Ա և Բ հավելվածներում:

Ուժգնության մակարդակի գնահատումը կարող է իրականացվել արտադրողների կողմից՝ օգտագործված աշխատանքային սարքերից արտանետումների մակարդակի վերաբերյալ տրամադրած տեղեկությունների հիման վրա կազմած գնահատման և հատուկ աշխատանքային գործելակերպերի դիտարկման կամ չափումների հիման վրա:

Ծովային փոխադրումների դեպքում անդամ պետությունները կարող են հաշվի առնել միայն 1 Հրց գերազանցող հաճախականության տատանումները:

2. Չափումները

Եթե չափումներն իրականացվում են 4(1) հոդվածի համաձայն, ապա կիրառվող մեթոդները կարող են ներառել նմուշառումը, որը պետք է ներկայացնի տվյալ մեխանիկական թրթռումներին անձամբ աշխատողի ռիսկը: Կիրառվող մեթոդները պետք է համապատասխանեն չափվող մեխանիկական թրթռումների բնորոշ հատկանիշներին,

շրջակա միջավայրի գործողություններին և չափիչ սարքավորումների բնորոշ հատկանիշներին:

3. Միջամտություն

4(4)(դ) հոդվածը կիրառվում է մասնավորապես, երբ մեխանիկական թրթռումները խանգարում են կառավարման վահանակների պատշաճ կառավարմանը կամ ցուցանիշների ընթերցմանը:

4. Անուղղակի ռիսկերը

4(4)(դ) հոդվածը կիրառվում է, մասնավորապես, երբ մեխանիկական թրթռումները միջամտում են կառույցների կայունությանը և հանգույցների անվտանգությանը:

5. Ուժգնության տարածումը

4(4)(է) հոդվածը կիրառվելու է, մասնավորապես, եթե գործունեության բնույթից ելնելով, աշխատողն օգտվում է գործատուի կողմից վերահսկվող մնացած կառույցներում, այդ կառույցներում ամբողջ մարմնի թրթռումները պետք է նվազեցվեն ըստ դրանց նպատակի և օգտագործման պայմանների՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած դեպքերի:

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի համատեղ հայտարարությունը

Եվրոպական պառլամենտը և Խորհուրդը վերահաստատում են նրանց՝ այլ ֆիզիկական նյութերի (լսելի ձայնային դաշտեր, էլեկտրական կամ մագնիսական դաշտեր կամ դրանց համակցությունը) վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկի ուսումնասիրումը շարունակելու պարտավորությունը: Այնուամենայնիվ, այլ ֆիզիկական նյութերի հետ կապված տեխնիկական բարդությունների առումով, գերակայությունը տրվել է թրթռումներին: Եվրոպական պառլամենտը և Խորհուրդը ընդունում են, այնուամենայնիվ, որ անհրաժեշտ է հնարավորինս շուտ Հանձնաժողովի առաջարկում նշված ֆիզիկական նյութերի վերաբերյալ հրահանգներ ընդունել: